

ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ՖԼԵՇ» ՄՊԸ՝ իրավաբան

**ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՅԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՄԱՐՍԻՆ**

Սույն գիտական հոդվածը նվիրված է կորպորացիաների խորհրդի էության, բովանդակության և առանձնահատկությունների վերհանմանը, խորհրդի կազմավորման և գործառնության վորման շրջանակներում ծագող մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությանը և գործնական առաջարկների ներկայացմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վեճերային բաժնետիրական ընկերությունների՝ որպես հատուկ տեսակի բաժնետիրական ընկերությունների խորհրդի ձևավորման և գործունեության բնութագրական գծերին, այդ թվում՝ խորհրդի դիտորդ անդամի կարգավիճակին, պաշտպանիչ դրույթներին և փոխհատուցման կառուցակարգին:

Վերոնշյալ կառուցակարգերի տեղայնացումը և ներդրումը հնարավորություն կընձեռեն ՀՀ օրենսդրությամբ լիարժեք կանոնակարգելու վեճերային բաժնետիրական ընկերությունները, այդ թվում՝ դրա խորհրդի առանձնահատկությունները, որը կբարելավի ՀՀ ներդրումային միջավայրը և կապահովի վեճերային ներդրումների արդյունավետ ներգրավումը:

Հիմնաբառեր - կորպորացիա, խորհուրդ, վեճերային բաժնետիրական ընկերություն, վեճերային ներդրող, պաշտպանիչ դրույթներ:

Կորպորացիաներում նպատակահարմար և արդյունավետ է, որ սեփականությունն առանձնացվի կառավարումից, իսկ կառավարման գործառույթը՝ կառավարման նկատմամբ հսկողության իրավունքից: Կորպորացիայում հսկողությունը հանգում է կառավարիչների գործունեության ստուգմանը և կորպորացիայի շահերի հետ հարաբերակցմանը՝ նպատակ ունենալով կանխել չարաշահումները և անորակ կառավարումը²:

Ինչպես Միլիկոնյան հովտի հին ասացվածքն է փաստում՝ լավ խորհուրդները չեն ստեղծում լավ ընկերություններ, սակայն վատ խորհուրդը ամեն անգամ «կոչնչացնի» ընկերությանը³: Սրանով իսկ շեշտվում են կորպորացիայի խորհրդի առանցքային նշանակությունն ու դերը կորպորացիայի կառավարման մարմինների համակարգում:

Առանձնացվում են կորպորատիվ կառավարման 2 հիմնական մոդել՝ **աութսայդերական և ինսայդերական**: Աութսայդերական մոդելը տարածված է այն երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա), որտեղ ընկերությունների ֆինանսավորումը գերակշռապես իրականացվում է ոչ թե բանկերի վարկավորման, այլ արժեթղթերի շուկայի միջոցով, բաժնետոմսերը բաշխվում են որակավորված ներդրողների միջև (կենսաթոշակային ֆոնդեր, սպահովագրական ընկերություններ):

Ինսայդերական մոդելի պարագայում՝ ընկերության նկատմամբ հսկողությունը կենտրոնացված է անձանց որոշակի խմբի ձեռքում, որոնք դրա հետ սերտորեն կապված են: Փոքր բաժնետերերի դերը կառավարման մեջ գործնականում հասցված է գրոյի, իսկ նրանց ֆինանսական շահերը, որպես կանոն, անտեսվում են⁴:

Կորպորատիվ կառավարման նշված մոդելներից յուրաքանչյուրին համապատասխանում է կանոնակարգի (երկայալատ), կանոնադրական (ունիտար) խորհուրդ⁵: Ունիտար խորհուրդը ավանդաբար բնութագրական է ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային, իսկ երկնակարգակ խորհուրդը՝ Գերմանիայի իրավակարգին:

Խորհուրդը մի կողմից ներկայացնում է բաժնետերերի շահերը և պաշտպանում է դրանք գործառնող ղեկավարությունից, մյուս կողմից գործում է որպես մենեջերների ներկայացուցիչ բաժնետերերի հետ հարաբերություններում: Խորհրդի հիմնական նշանակությունը հանգում է երկու կողմերի շահերի հավասարակշռմանը, որում վերջինս հանդես է գալիս արբիտրի և հաղորդակցողի դերում⁶:

Տ. Կաշանիևայի բնութագրմամբ՝ խորհուրդը մարմին է, որը իրականացնում է հիմնական ինտելեկտուալ աշխատանքը և գործառնող կառավարման մարմինների նկատմամբ հսկողական գործառույթներ:

Խորհուրդը դիտարկվում է և՛ որպես կառավարման համար նախատեսված մարմին, և՛ որպես մարմին, որի նշանակությունը հանգում է բացառապես հսկողական գործունեությանը, իսկ որոշ գիտնականներ նրա գործառույթներում գտնում են կառավարման և հսկողության խառնուրդ (համակցություն)⁷:

Խորհրդի հսկողական լիազորությունների թվին պայմանականորեն կարելի է դասել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներին հավանություն տալու, ժողովի գումարման լիազորությունները՝ որպես ընկերության գործունեության նկատմամբ նախնական հսկողության գործառույթի

դրսևորում: Մյուս լիազորությունները կարելի է համարել ավելի շատ կառավարչական, քան հսկողական :

Հետաքրքիր է խորհրդի հսկողական լիազորությունների իրականացման կառուցակարգը **գերմանական** իրավակարգում: Գերմանական օրենսդրությամբ խորհրդի հսկողական լիազորությունները ունեն մի շարք ուղղություններ, ներառյալ՝ առևտրային քաղաքականության, ֆինանսական, ներդրումային, անձնակազմի թվաքանակի պլանավորման, ընթացիկ գործերի վիճակի, շահութաբերության, կնքված գործարքների և իրավաբանորեն նշանակալի այլ գործողությունների հսկողություն:

Հսկողական գործառույթի իրականացումը հնարավոր է միայն գործադիր մարմինների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տրամադրված հաշվետվությունների, ինչպես նաև ֆինանսական և այլ փաստաթղթերի քննարկման միջոցով :

Մասնագիտական հանրույթի կողմից քննարկվում է, թե **հնարավոր է արդյոք մեկ մարմնի լիազորություններում միավորել և՛ կառավարման, և՛ հսկողության գործառույթները:**

Ա. Կուշնիրուկը կարծում է, որ հսկողական և գործադիր մարմինների լիազորությունների խառնումը, ինչպես նաև խորհրդի և կոլեգիալ գործադիր մարմնի լիազորությունների համակցումը չեն կարող դրական ազդել բաժնետերերի կողմից կառավարիչների գործունեության նկատմամբ հսկողության հնարավորության վրա¹⁰ :

Մեր գնահատմամբ ևս նպատակահարմար է ընդունելի չէ կառավարչական և հսկողական լիազորությունների (գործառույթների) կենտրոնացումը մեկ մարմնի (խորհրդի) ձեռքում, քանի որ՝

ա) որոշ դեպքերում գործադիր մարմնի անդամները, միաժամանակ դառնալով խորհրդի անդամ, փաստացի հսկողություն են իրականացնում իրենք իրենց նկատմամբ, ինչը խնդիրներ կարող է հարուցել դրա օբյեկտիվության և արդյունավետության առումով,

բ) խորհրդի կողմից կառավարչական լիազորությունների իրականացման պարագայում կարող է առաջ գալ նաև խորհրդի նկատմամբ հսկողության հարցը, որը ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ապահովել ժողովի կողմից:

Մենք համակարծիք ենք այն պնդմանը, որ բաժնետիրական ընկերության մարմինների կառուցվածքում պետք է լինի կառավարչական և հսկողական գործառույթների հստակ տարանջատում: Այսինքն՝ հսկողական լիազորությունները պետք է վերապահել խորհրդին, իսկ կառավարման գործառույթը փոխանցել գործադիր մարմնին:

Բացի այդ, խորհրդի կազմում չպետք է ներառվեն ո՛չ վարչության անդամները, ո՛չ միանձնյա գործադիր մարմինը, ո՛չ այլ անձինք, որոնք լիազորված

են ամբողջությամբ կամ մասամբ վարելու ընկերության գործերը :

Հետաքրքրական է նաև **խորհրդի անդամների և ընկերության միջև հարաբերությունների բնույթը** (քաղաքացիական, կորպորատիվ, աշխատանքային): Այս հարցի կապակցությամբ ևս առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ:

Վ. Պրոխորենկոն գտնում է, որ խորհրդի անդամների և բաժնետիրական ընկերության միջև հարաբերությունները աշխատանքային չեն, բայց դրանց վրա կարող են տարածվել աշխատանքային իրավունքի նորմերը, եթե կողմերը դա անհրաժեշտ համարեն¹³ : Սինչդեռ **Կ. Պախտմովան** կարծում է, որ խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականությունները առաջին հերթին կորպորատիվ (այլ ոչ թե աշխատանքային) են, ուստի աշխատանքային հարաբերությունների ծագումը կամ դադարումը չի ազդում խորհրդի անդամի կարգավիճակի վրա :

Իսկ ըստ **Ա. Մակովսկայայի**՝ այն դեպքում, երբ խոսքը այն անձանց մասին է, որոնց ներկայացնում են բաժնետիրական ընկերության մարմինները կամ ներառված են դրանցում և ընկերության հետ միաժամանակ կապված են աշխատանքային հարաբերություններով, բխվում ենք երկակի իրավական կարգավիճակի հետ՝ ընկերության աշխատողի և ընկերության կառավարման մարմնի (մարմնի անդամի) կարգավիճակները¹⁵ :

Գիտության մեջ այդ հարաբերությունները որակվում են նաև որպես ներկայացուցչության հատուկ տարատեսակ , պարտավորական հարաբերություններ, որոնց հիմքում ընկած է գործակալության¹⁷ կամ ծառայությունների մատուցման¹⁸ պայմանագիր կամ հատուկ տեսակի պայմանագիր, որի առարկան է կազմում խորհրդի անդամի կողմից իրավաբանական և փաստական գործողությունների կատարումը, որոնք հանգում են կառավարչական գործառույթների իրականացմանը և կապված են խորհրդին մասնակցության հետ¹⁹ :

Վերը նշված տեսակետների հաշվառմամբ՝ կարծում ենք, որ խորհրդի անդամների և կորպորացիայի հարաբերությունները ունեն կորպորատիվ բնույթ, ինչը, սակայն, չի բացառում նրանց հետ աշխատանքային և/կամ այլ պայմանագրերի կնքումն ու mutatis mutandis աշխատանքային և/կամ այլ օրենսդրության կիրառումը (պայմանով, որ դա չի հակասում կորպորատիվ օրենսդրությանը):

Մյուս կողմից, հարց է առաջանում, թե **կարող են արդյոք բաժնետերերը խորհրդի անդամների թեկնածուների համար սահմանել լրացուցիչ չափանիշներ**²⁰ : Այս առումով հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «ԲԸ օրենք», ընդունված՝ 25.09.2001թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831) չի արգելում խորհրդի թեկնածուների համար սահ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանել այլ՝ հավելյալ չափանիշներ, այդ թվում՝ որոշակի կրթության, որակավորման, պրոֆեսիոնալիզմի, կոնկրետ ոլորտում փորձառության և այլն²¹ : Հետևապես, բաժնետերերը իրավասու են սեփական հայեցողությամբ որոշելու խորհրդի անդամների ընտրության չափանիշները :

ԲԸ օրենքի 85-րդ հոդվածից բխում է նաև, որ յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ, խորհրդի անդամ կարող է լինել նաև ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ : Մյուս կողմից, ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել :

Փաստորեն խորհրդի անդամ կարող են լինել ինչպես ընկերության մասնակիցները (.ներքին տնօրեններ), այնպես էլ այլ անձինք («արտաքին տնօրեն») : Արտաքին տնօրենները, որպես կանոն, կառավարման ոլորտի բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված մասնագետներ են, որոնք ունակ են մշակելու ընկերության որակյալ քաղաքականություն և իրականացնելու անհրաժեշտ հսկողություն ընկերության կառավարման մարմինների գործունեության նկատմամբ²² :

Այս պարագայում խնդրահարույց կարելի է համարել ընկերության խորհրդում գործադիր մարմնի ներկայացուցիչներ ընդգրկելու օրենսդրական հնարավորությունը : Գործադիր մարմնի անդամների՝ միաժամանակ երկու մարմիններում լինելը հանգեցնում է կառավարման (գործադիր) և հսկողական (խորհուրդ) լիազորությունների խաչման, այսինքն՝ գործադիր մարմնի անդամը հայտնվելով խորհրդում վերահսկում է իր իսկ գործունեությունը, ինչը կասկածի տակ կարող է դնել դրա արդյունավետությունն ու օբյեկտիվությունը :

Մեր գնահատմամբ, պետք է հստակ տարանջատել գործադիրի և խորհրդի իրավասությունը (լիազորությունները)՝ օրենքով արգելելով գործադիրի անդամների ընդգրկումը խորհրդի կազմում : Նշվածն, իր հերթին, չի խոչընդոտում բաժնետերերի՝ սեփական (գործադիրի անդամ չհանդիսացող) թեկնածուներին խորհրդում ընտրելու կամ նշանակելու հնարավորությունը :

Հետաքրքրական է խորհրդի անդամների վարձատրության հարցը այն իմաստով, որ վարձատրության ստացումը խորհրդի անդամին կախվածության մեջ է դնում այն անձանցից, որոնք որոշում են այդպիսի վարձատրության չափը և մյուս կողմից վարձատրության բացակայությունը մշտական եկամուտ չունեցող անդամին դարձնում է կախյալ :

Որպես այդ խնդրի լուծման տարբերակ՝ *Կ. Պավլովյան* առաջարկել է օրենսդրորեն սահմանել վարձատրության նվազագույն չափը (գումարը)²³ :

Կարծում ենք, որ ի զարգացումն այդ առաջարկի՝ կարելի է նախատեսել նաև խորհրդի անդամների

րի վարձատրության չափի հաշվարկման գործունե կառուցակարգ՝ ելնելով տարբեր չափորոշիչներից (օրինակ՝ ընկերության տարեկան շահույթի որոշակի տոկոսի չափով) :

Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք կարող են անցկացվել ինչպես խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ, այնպես էլ հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) : Նիստերի անցկացման համար պարտադիր է կանոնադրությամբ սահմանված քվորումի ապահովումը, որը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել, հակառակ դեպքում այն լրացնելու նպատակով պետք է գումարվի արտահերթ ժողով (ԲԸ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր) :

Մասնագիտական գրականության մեջ նպատակահարմար է համարվում սահմանել առավել կարևոր հարցերի շրջանակ, որոնցով որոշումները կարող են ընդունվել միայն²⁴ խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ : Նշված առաջարկը, ըստ մեզ, չի կարող կենսունակ լինել, քանի որ խորհրդի անդամները կարող են լինել տարբեր պետություններում, և այդ պայմաններում դժվար է մշտապես ապահովել նրանց համաժամանակյա ֆիզիկական ներկայությունը նիստերին և հնարավոր չի լինի ապահովել խորհրդի նիստերի քվորումն ու բնականոն գործունեությունը :

Իր գործունեության շրջանակներում խորհուրդը ընդունում է որոշումներ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ (իսկ ժողովի այն իրավասությունների վերաբերյալ որոշումները, որոնք վերապահվել են խորհրդի իրավասությանը՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով) եթե օրենքով, կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ : Քվեարկելիս խորհրդի յուրաքանչյուր անդամն ունի միայն 1 ձայն, որի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում : Իսկ խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ :

Այլ իրավակարգերում գործնականում ընդունելի է այն մոտեցումը, որ եթե բաժնետերն ունի խորհրդում սեփական ներկայացուցչին նշանակելու համար անհրաժեշտ բաժնետոմսեր, ապա խորհրդի տարբեր նիստերին նա կարող է ուղարկել տարբեր ներկայացուցիչների/երրորդ անձանց (օրինակ՝ խորհրդի անդամի հիվանդություն, այլ պաշտոնի տեղափոխում, պաշտոնից ազատում և այլն), ինչպես նաև նախատեսված է խորհրդի անդամի՝ այլ անդամների միջոցով գրավոր քվեարկության նախօրոք²⁵ իրականացումը (քվեաթերթիկի տրամադրումը) :

Այս մոտեցումը, գտնում ենք՝ կարող է վտանգել

www.aradadutyjournal.com

ընկերության շահերը, քանի որ խորհրդի նիստերին մասնակցելու և որոշումներ ընդունելու համար՝ հարկ է պատշաճ տեղեկացված լինել ընկերության գործունեության վերաբերյալ, ինչը բարդանում է խորհրդի մշտապես փոփոխվող անդամների պարագայում կամ եթե խորհրդի անդամը անմիջականորեն չի մասնակցում նիստին և որոշում է կայացնում առանց խորհրդի մյուս անդամների հետ խորհրդակցելու:

Նշենք նաև, որ խորհրդի նիստերն արձանագրվում են, համապատասխան արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում, որը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար (ԲԸ օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Անդրադառնալով վենչուրային բաժնետիրական ընկերություններում²⁶ (այսուհետ՝ «ՎԲԸ») խորհրդի ձևավորման և կազմի առանձնահատկություններին՝ հարկ է ընդգծել, որ խորհուրդը առանցքային նշանակություն ունի ընկերության ընդհանուր ղեկավարման և գործունեության ռազմավարական ուղղությունների որոշման հարցում:

Ընդ որում՝ եթե ընդհանուր բաժնետիրական ընկերություններում խորհուրդը ձևավորվում է նրա բաժնետերերի կողմից, ապա ՎԲԸ-ում այդ գործընթացի վրա վենչուրային ներդրող բաժնետերերը ունեն նշանակալի ազդեցություն՝ նշանակելով/ընտրելով խորհրդի մեկ կամ մի քանի անդամի՝

ՎԲԸ-ներում գործում է նաև խորհրդի **դիտորդ անդամի** կարգավիճակը, որը (դիտորդ անդամը) կարող է լինել խորհրդի անդամի փոխարեն կամ ի լրումն խորհրդի անդամի, և որը իրավունք ունի մասնակցելու խորհրդի նիստերին և քննարկումներին՝ առանց ձայնի իրավունքի²⁸:

Խորհրդում վենչուրային ներդրողի ընտրած/նշանակած դիտորդ անդամը հնարավորություն է տալիս մշտադիտարկելու խորհրդի գործունեությունն ու վերջինի կողմից ընդունվելիք որոշումները, ինչպես նաև կանխելու նրանց շահերին չհամապատասխանող որոշումներն ու գործընթացները:

Վաղ փուլերում (early stage) ՎԲԸ-ներում խորհուրդը հիմնականում կազմված է լինում 3-ից 5 անդամից:

Խորհրդի եռանդամ կազմը հետևյալն է՝

1. հիմնադիր/գործադիր մարմին,
2. վենչուրային ներդրող,
3. խորհրդի անկախ անդամ կամ այլ հիմնադիր:

Իսկ խորհրդի հնգանդամ կազմը ներառում է՝

1. հիմնադիր,
2. գործադիր մարմին,
3. վենչուրային ներդրող,

4. այլ վենչուրային ներդրող,
5. խորհրդի անկախ անդամ:

Հետագա փուլերում (mature) խորհուրդը ունենում է ավելի բազմանդամ կազմ (7-ից 9 անդամ)²⁹ խորհրդի ավելի շատ անկախ անդամներով՝

Խորհուրդը հսկելու (վերահսկելու) իրավունքից բացի, վենչուրային ներդրողները, որպես կանոն, կիրառում են նաև **պաշտպանիչ դրույթներ (protective provisions)**:

Պաշտպանիչ դրույթները բովանդակում են արդյունավետ նեգատիվ (վետո) իրավունքներ, որոնք վենչուրային ներդրողները ունեն ՎԲԸ-ի գործողությունների և ընդունվող որոշումների կապակցությամբ³⁰:

Սա նշանակում է, որ վերջինները (օպերացիոնալ/գործառնական, կորպորատիվ կառուցվածքի, արժեթղթերի հարցերով)³¹ հնարավորություն են ստանում կանխորոշելու ՎԲԸ-ի գործունեությունը՝ կանխելով իրենց շահերից չբխող որոշումները:

Այլ խոսքով, պաշտպանիչ դրույթների ուժով, առանց բաժնետեր վենչուրային ներդրողների համաձայնության, ի թիվս այլնի, արգելվում է՝

- միաձուլել ընկերությունը, վաճառել ընկերությունը կամ նրա ակտիվները կամ կատարել բիզնեսի հիմնարար փոփոխություններ կամ մտնել բիզնեսի նոր ուղղություն,
- փոփոխել վենչուրային ներդրողներին պատկանող բաժնետոմսերի պայմանները,
- թողարկել և տեղաբաշխել հավելյալ բաժնետոմսեր,
- թողարկել վենչուրային ներդրողներին պատկանող բաժնետոմսերին հավասար կամ առավել արտոնյալ պայմաններով բաժնետոմսեր,
- հետ գնել հասարակ (սովորական) բաժնետոմսերը,
- փոփոխել կանոնադրությունը կամ կանոնակարգերը,
- փոփոխել խորհրդի կազմը և չափը,
- վճարել կամ հայտարարել շահաբաժին (շահութաբաժին),
- գումար վերցնել (դրամական միջոցներ ներգրավել),
- դուստր ընկերությունում չունենալ արժեթղթեր, եթե դրա միակ սեփականատերը ընկերությունը չէ,
- դիմել սնանկության,
- լիցենզավորել ընկերության մտավոր սեփականությունը,
- լուծարել ընկերությունը կամ փոփոխել հսկողությունը,
- և այլն³²:

Մասնագետների կողմից առաջարկվում է ՎԲԸ-ներում նախատեսել խորհրդի հաստատման իրավունքները օպերացիոնալ/գործառնական հարցերով, իսկ առավել էական/հիմնարար և ռազմա-

վարական հարցերով հաստատման իրավունքները վերապահել ժողովին, իսկ որոշ հարցերով կարող է պահանջվել նաև ներդրողների կամ նրանց մեծամասնության հաստատումը (investor majority or veto rights)³³ :

Նշենք նաև, որ ՎԲԸ-ների ֆինանսավորման (ներդրումների) հետագա փուլերում առաջ է գալիս այն հարցը, թե ինչպես են կիրառվելու պաշտպանիչ դրույթները բաժնետոմսերի նոր դաս(եր)ի նկատմամբ, մասնավորապես, նոր բաժնետոմսերի սեփականատերերը ստանում են իրենց սեփական պաշտպանիչ դրույթները, թե քվեարկում են մյուս բաժնետերերի հետ՝ որպես մեկ դաս³⁴ :

Պաշտպանիչ դրույթները հնարավորություն են ընձեռում վեճուրային ներդրողներին ստանալ հավելյալ իրավունքներ և ունենալ վերահսկողության ու ազդեցության լծակներ ընկերության նկատմամբ իրենց համար էական նշանակություն ունեցող հարցերով որոշումներ կայացնելիս:

Միևնույն ժամանակ, հատուկ արտոնյալ բաժնետոմսերի միջոցով վեճուրային ներդրողները ստանում են անհամաչափ ավելի շատ վերահսկողություն, քան արժեթղթեր, այսինքն՝ այնպիսի եզակի կորպորատիվ կառավարման կառուցվածք, որտեղ արտոնյալ բաժնետերերն են առավելապես հսկում ընկերությունը, այլ ոչ հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը :

ՎԲԸ-ների խորհրդում գործում է նաև փոխհատուցման (indemnification) կառուցակարգը, ըստ որի՝ ընկերությունը պետք է փոխհատուցի վեճուրային ներդրողներին, ինչպես նաև խորհրդի անդամներին³⁶ օրենքով թույլատրելի առավելագույն չափով :

Փոխհատուցման դրույթի ներդրումը նպատակ է հետապնդում սահմանափակելու խորհրդի անդամների պատասխանատվությունը և ազատելու վնասների հատուցման պարտականությունից՝ պաշտպանելով նրանց երրորդ անձանց (այդ թվում՝ ընկերության այլ բաժնետերերի) ցանկացած պահանջներից:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է հստակեցնել ՎԲԸ-ներում խորհրդի առանձնահատկությունները և նախատեսել խորհրդի դիտորդ անդամի (անդամների) ինստիտուտը, պաշտպանիչ դրույթները և փոխհատուցման կառուցակարգը:

¹ Տե՛ս, Павлова К. П., Актуальные вопросы правового регулирования организации и деятельности совета директоров (наблюдательного совета) акционерного общества по российскому законодательству, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва 2013, С. 49.

² Տե՛ս, Прохоренко В. В., Совет директоров в системе органов акционерного общества, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург, 2006, С. 41.

³ Տե՛ս, Orrick, Herrington & Sutcliffe LLP, Orrick’s Guide to Venture Capital Deals in Germany, 2018 Edition (<https://s3.amazonaws.com/cdn.orrick.com/files/Insights/Germany-VC-FINAL-web.pdf>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.), С. 52.

⁴ Տե՛ս, Ավետիսյան Վ. Գ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 329-330, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 42, Цепов Г.В., Акционерные общества: теория и практика. С. 38-39, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 52-53:

⁵ Տե՛ս, Алиева К. М., Роль Совета директоров акционерного общества при совершении сделок, выходящих за пределы его обычной хозяйственной деятельности: Дис. ... канд. юрид. наук. М. 2005, С. 38, Шеленин В.Ю., Правовое регулирование корпоративного управления в акционерных обществах: Дис... канд. юрид. наук. Москва. 2004, С. 116-118, Maassen G. F., An International Comparison of Corporate Governance Models, Third edition, 2002.

⁶ Տե՛ս, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 63:

⁷ Տե՛ս, Гинько С. А., Управление в хозяйственных обществах: правовые аспекты, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Санкт-Петербург, 2009, С. 53, Кашанина Т.В., Корпоративное (внутрифирменное) право. М., 2003, С. 251.

⁸ Տե՛ս, Фроловский Н.Г., Управление предпринимательскими корпорациями в Российской Федерации (правовой

аспект): Дис. ... канд. юрид. наук. Белгород. 2004, С. 116.

⁹ Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 61-62, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 68:

¹⁰ Տե՛ս, Федосеев С. В., Гражданско-правовое положение членов совета директоров акционерных обществ по законодательству Российской Федерации, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012, С. 47-48.

¹¹ Տե՛ս, Кушнирук А.С., Основные закономерности становления и развития акционерного права в России: Дис. ... канд. юрид. наук. М. 2005, С. 11.

¹² Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 73:

¹³ Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 189:

¹⁴ Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 189, Пахомова К. Н., О правовом статусе Совета директоров, С. 9-11.

¹⁵ Տե՛ս, Маковская А.А., Гражданско-правовая ответственность руководителей акционерного общества перед ним за причиненные убытки. // Суд и право / отв. ред., сост. Б.М. Гонгало, И.Ш.Файзулдинов. Екатеринбург: Институт частного права, 2005, С. 194-195.

¹⁶ Տե՛ս, Козлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003, С. 476.

¹⁷ Տե՛ս, Степанов Д.И., Компания, управляющая хозяйственным обществом // Хозяйство и право. 2000. N 10, С. 64-69.

¹⁸ Տե՛ս, Степанов П.В., Правовая квалификация отношений, возникающих между единоличным исполнительным органом и акционерным обществом // Хозяйство и право. 2002. N 12, С. 95-97?

¹⁹ Տե՛ս, Федосеев С. В., նշվ. աշխ., էջ 89, 95:

²⁰ Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 195:

²¹ Տե՛ս, Могилевский С.Д., Самойлов И.А., Корпорации в России. Правовой статус и основы деятельности. - М.: Дело, 2006, С. 241.

²² Տե՛ս, Телокина М.В., Федеральному закону об акционерных обществах (постатейный). - М.: Волтерс Клувер. 2005, С. 418.

²³ Տե՛ս, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 82:

²⁴ Տե՛ս, Ионцев М.Г., Акционерные общества: Правовые основы. Имущественные отношения. Управление и контроль. Защита нрав акционеров. - 3-е изд.- М.: Ось-89, 2005, С. 274.

²⁵ Տե՛ս, Федосеев С. В., նշվ. աշխ., էջ 115, Закон об акционерных обществах Германии. Параллельный русский и немецкий тексты = Aktiengesetz. Paralleler russischer und deutscher Text/ [предисл. В. Бергман; науч. ред. и алф.-пр. ук. на рус. яз. Т.Ф. Яковлева; пер. с нем. и алф.-пр. ук. на нем. яз. Е.А. Дубовицкая]. М.: Волтерс Клувер, 2009, С. 118.

²⁶ Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին նւմուշ՝ 20.03.2023թ.)

²⁷ Տե՛ս, Lewis M., Preparing a venture capital term sheet (<https://www.morganlewis.com/-/media/files/supplemental/2020/preparing-a-venture-capital-term-sheet.pdf>) (վերջին նւմուշ՝ 20.03.2023թ.), էջ 10:

²⁸ Տե՛ս, Orrick, Herrington & Sutcliffe LLP, նշվ. աշխ., էջ 53:

²⁹ Տե՛ս, Feld B., Mendelson J., Venture Deals, Be smarter than your lawyer and venture capitalist, Third Edition, John Wiley & Sons, Inc., Hoboken, New Jersey, 2016, էջ 68-70, Linde L., Prasad A., Venture Support Systems Project: Angel Investors, MIT Entrepreneurship Center, February, 2000, էջ 41:

³⁰ Տե՛ս, Smith J., Getting to yes on our terms: venture capital financial contracts in action during periods of limited liquidity, University of Toronto Law School, August, 2006, էջ 35:

³¹ Տե՛ս, Linde L., Prasad A., նշվ. աշխ., էջ 42:

³² Տե՛ս, Lewis M., նշվ. աշխ., էջ 11, Feld B., Mendelson J., նշվ. աշխ., էջ 70-71, Aronson D. H., Venture Capital: A Practical Guidebook for Business Owners, Managers and Advisors, New York, August, 2007, էջ 36-38, Dr. McKaskill T., An Introduction to Angel Investing - A guide to investing in early stage entrepreneurial ventures, Australia, June 2009, էջ 21:

³³ Տե՛ս, Orrick, Herrington & Sutcliffe LLP, նշվ. աշխ., էջ 51, 54:

³⁴ Տե՛ս, Feld B., Mendelson J., նշվ. աշխ., էջ 72-73:

³⁵ Տե՛ս, Giudici P., Agstner P., Startups and Company Law: The Competitive Pressure of Delaware on Italy (and Europe?), Law Working Paper N° 471/2019, Bozen-Bolzano, August, 2019, С. 12.

³⁶ Տե՛ս, Feld B., Mendelson J., նշվ. աշխ., էջ 100:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Павлова К. П., Актуальные вопросы правового регулирования организации и деятельности совета директоров (наблюдательного совета) акционерного общества по российскому законодательству, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва 2013.
2. Прохоренко В. В., Совет директоров в системе органов акционерного общества, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург, 2006.

3. Orrick, Herrington & Sutcliffe LLP, Orrick's Guide to Venture Capital Deals in Germany, 2018 Edition (<https://s3.amazonaws.com/cdn.orrick.com/files/Insights/Germany-VC-FINAL-web.pdf>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.):
4. Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավասարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (սնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, Прохоренко В. В., նշվ. , Цепов Г.В., Акционерные общества: теория и практика., Павлова К. П. նշվ. աշխ.:
5. Алиева К.М., Роль Совета директоров акционерного общества при совершении сделок, выходящих за пределы его обычной хозяйственной деятельности: Дис. ... канд. юрид. наук. М. 2005, С. 38, Шеленин В.Ю., Правовое регулирование корпоративного управления в акционерных обществах: Дис... канд. юрид. наук. Москва. 2004, , Maassen G. F., An International Comparison of Corporate Governance Models, Third edition, 2002.
6. Павлова К. П., նշվ. աշխ.:
7. Гинько С. А., Управление в хозяйственных обществах: правовые аспекты, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Санкт-Петербург, 2009, С. 53, Кашанина Т.В., Корпоративное (внутрифирменное) право. М., 2003.
8. Фроловский Н.Г., Управление предпринимательскими корпорациями в Российской Федерации (правовой аспект): Дис. ... канд. юрид. наук. Белгород. 2004.
9. Прохоренко В. В., նշվ. աշխ., Павлова К. П., նշվ. աշխ.:
10. Федосеев С. В., Гражданско-правовое положение членов совета директоров акционерных обществ по законодательству Российской Федерации, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012.
11. Кушнирук А.С., Основные закономерности становления и развития акционерного права в России: Дис. ... канд. юрид. наук. М. 2005,.
12. Прохоренко В. В., նշվ. աշխ.:
13. Прохоренко В. В., նշվ. աշխ.:
14. Прохоренко В. В., նշվ. աշխ., Пахомова К. Н., О правовом статусе Совета директоров.
15. Маковская А.А., Гражданско-правовая ответственность руководителей акционерного общества перед ним за причиненные убытки. // Суд и право / отв. ред., сост. Б.М. Гонгалов, И.Ш.Файзулдинов. Екатеринбург: Институт частного права, 2005.
16. озлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003.
17. Степанов Д.И., Компания, управляющая хозяйственным обществом // Хозяйство и право. 2000. N 10.
18. Степанов П.В., Правовая квалификация отношений, возникающих между единоличным исполнительным органом и акционерным обществом // Хозяйство и право. 2002. N 12.
19. Федосеев С. В., Гражданско-правовое положение членов совета директоров акционерных обществ по законодательству Российской Федерации, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012.
20. Прохоренко В. В., նշվ. աշխ.:
21. Могилевский С.Д., Самойлов И.А., Корпорации в России. Правовой статус и основы деятельности. - М.: Дело, 2006.
22. Телюкина М.В., Комментарий к Федеральному закону об акционерных обществах (постатейный). - М.: Волтерс Клувер. 2005.
23. Павлова К. П., նշվ. աշխ.:
24. Ионцев М.Г., Акционерные общества: Правовые основы. Имущественные отношения. Управление и контроль. Защита прав акционеров. - 3-е изд.- М.: Ось-89, 2005.
25. Федосеев С. В., նշվ. աշխ., Закон об акционерных обществах Германии. Параллельный русский и немецкий тексты = Aktiengesetz. Paralleler russischer und deutscher Text/[предисл. В. Бергман; науч. ред. и алф.-пр. ук. на рус. яз. Т.Ф. Яковлева; пер. с нем. и алф.-пр. ук. на нем. яз. Е.А. Дубовицкая]. М.: Волтерс Клувер, 2009.
26. Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.)
27. Lewis M., Preparing a venture capital term sheet (<https://www.morganlewis.com/-/media/files/supplemental/2020/preparing-a-venture-capital-term-sheet.pdf>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.), էջ 10:
28. Orrick, Herrington & Sutcliffe LLP, նշվ. աշխ.:
29. Feld B., Mendelson J., Venture Deals, Be smarter than your lawyer and venture capitalist, Third Edition, John Wiley & Sons, Inc., Hoboken, New Jersey, 2016, էջ 68-70, Linde L., Prasad A., Venture Support Systems Project: Angel Investors, MIT Entrepreneurship Center, February, 2000:
30. Smith J., Getting to yes on our terms: venture capital financial contracts in action during periods of limited liquidity, University of Toronto Law School, August, 2006:
31. Linde L., Prasad A., նշվ. աշխ.:
32. Lewis M., նշվ. աշխ., էջ 11, Feld B., Mendelson J., նշվ. աշխ., էջ 70-71, Aronson D. H., Venture Capital: A Practical Guidebook for Business Owners, Managers and Advisors, New York, August, 2007, էջ 36-38, Dr. McKaskill T., An

- Introduction to Angel Investing - A guide to investing in early stage entrepreneurial ventures, Australia, June 2009, էջ 21:
33. Orrick, Herrington & Sutcliffe LLP, նշվ. աշխ.:
34. Feld B., Mendelson J., նշվ. աշխ.:
35. Giudici P., Agstner P., Startups and Company Law: The Competitive Pressure of Delaware on Italy (and Europe?), Law Working Paper N° 471/2019, Bozen-Bolzano, August, 2019:
36. Feld B., Mendelson J., նշվ. աշխ.:

Карен Меликсетян
Аспирант кафедры гражданского права ЕГУ,
юрист ООО “ФЛЕШ”

РЕЗЮМЕ

Совет как орган, осуществляющий общее руководство корпорацией

Данная научная статья посвящена выявлению сущности, содержания и особенностей совета корпораций, изучению ряда проблем, возникающих в рамках формирования и функционирования совета, и представлению практических предложений. Особое внимание было уделено характерным чертам формирования и деятельности совета венчурных акционерных обществ как особого вида акционерных обществ, в том числе статусу наблюдательного члена совета, защитным положениям и механизму компенсации.

Локализация и внедрение вышеуказанных механизмов даст возможность полноценно регламентировать по законодательству РА венчурные акционерные общества, в том числе особенности их совета, что улучшит инвестиционный климат РА и обеспечит эффективное привлечение венчурных инвестиций.

Ключевые слова: корпорация, совет, венчурное акционерное общество, венчурный инвестор, защитные положения.

Karen Meliksetyan
PhD student of the Department of Civil Law of YSU,
Lawyer of “FLASH” LLC

SUMMARY

The board as a body performing general management of the corporation

This scientific article is devoted to the identification of the essence, content and features of the board of corporations, the study of a number of problems arising within the framework of the formation and functioning of the board, and the presentation of practical proposals. Particular attention was paid to the characteristic features of the formation and activity of the board of venture joint-stock companies as a special type of joint-stock companies, including the status of a supervisory board member, protective provisions and indemnification mechanism.

Localization and implementation of the above-mentioned mechanisms will make it possible to fully regulate venture joint-stock companies under the legislation of the Republic of Armenia, including the specifics of their board, which will improve the investment climate of the Republic of Armenia and ensure effective attraction of venture investments.

Key words: corporation, board, venture joint stock company, venture investor, protective provisions.

Բնագիրը ներկայացվել է 22.03.2023թ.

Ընդունվել է տպագրության 27.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյանը